

ԱՐԴԵՕՔ ՈՐԵՒԷ ՅՈՅԱ ԿԱՅ

Քանի որ մեծ Աստուծոյ դէմ մեղանշած ենք, մեր պատիժն ալ շատ մեծ պէտք է ըլլայ, որքան ալ մենք «բարի» եղած ըլլանք: Երեւակայեցէք ոճրագործ մը որ դատաւորին ազաչէ ըսելով. «Ձիւ ազատ արձակէ, քանի որ նայիր թէ որքան մարտիկ չեմ մեռցուցած»: Արդարութիւնը պիտի պահանջէ որ ան պատժուի միայն մէկ մարդ մեռցուցած ըլլալուն համար:

Նոյնպէս, բարի կեանք մը չի կրնար ջնջել միայն մէկ մեղք իսկ: Պէտք է մեր մեղքին պատիժը կրենք յաւիտեանական դժոյքի մը մէջ:

ԻՆՉ Է ՅՈՅԱԸ

Երկու ձեւով կրնանք մեր պատիժը հատուցանել: Մէկ կերպը անվերջ պատիժով մը, յաւիտեանական դժոյքի մը մէջ: Երկրորդ կերպը՝ մեր պարտքը կրնանք վճարել կատարեալ բանով մը: Միակ բանը որ անսահմանօրէն կատարեալ է Յիսուս Քրիստոսն է: Աստուած այնպէս սիրեց մեզ որ իր որդին Յիսուս Քրիստոսը աշխարհ զրկեց որ ինքզինք ներկայացուց իբր հատուցում մեր մեղքերուն արժանի պատիժին:

Բ. Կորնթացիս 5:21-ի մէջ գրուած է. «Վասնզի Աստուած զանիկա որ մեղք չէր գիտեր, մեզի համար մեղաւոր սեպեց, որպէսզի մենք անոր միջոցով Աստուծոյ արգարներն ըլլանք»: Յիսուս Քրիստոսի խաչին վրայի մահով եւ իր յարութիւնով թշնամին յաղթուած է - մեղքը պարտուած: Հոգեւորապէս մեռածները կրնան կենդանանալ:

Յիսուս Քրիստոս մեզ ազատներ կ'ընէ եթէ հաստատանք թէ ան մեր մեղքերուն համար մեռաւ: Եփեսացիս 2:8-ի մէջ կ'ըսէ. «Վասնզի շնորհքով փրկուած էք դուք հաւատքի միջոցաւ, եւ այս ոչ թէ ձեզմէ է, հապա Աստուծոյ պարգեւն է, ոչ թէ գործերէն, որ մէկը չպարծի»:


Հաւատք ունենալ կը նշանակէ հաւատալ ինչ որ Սուրբ Գիրքը կ'ըսէ քու մասին, քու մեղքերուդ մասին, եւ վստահիլ Քրիստոսի խաչին վրայի մահուան Աստուծոյ սուրբ արդարութիւնը գոհացնելու համար:

Դուն որ սուրբ Աստուծոյ առջեւ կեցած ես

իբր յանցաւոր, եւ անօգնական մեղաւոր մը, անկեղծ զզջումով խնդրէ Քրիստոսէ որ քեզ ազատէ եւ ասկէ յետոյ Քրիստոս քու կեանքիդ մէջ իր արժանաւոր տեղը գրաւէ եւ կարենաս իրեն համար ապրիլ:

Այո՛, յոյս կայ: Հռոմայեցիս 10:9 կ'ըսէ. «Եթէ քու բերնովդ Յիսուսը Տէր խոստովանիս ու քու սրտիդ մէջ հաւատաս թէ Աստուած զանիկա մեռելներէն յարուց, պիտի փրկուիս»:

Անոնք որոնք Քրիստոսի կը վստահին իրենց փրկութեան համար Աստուծոյ զուակնե ըն են: Սուրբ Գիրքը կ'ըսէ. «Բայց որոնք որ զինք ընդունեցին անոնց իշխանութիւն տուաւ Աստուծոյ որդիներ ըլլալու, որոնք կը հաւատան իր անուանը» (Յովհ. 1:12):



Քրիստոս Մեռաւ Որպէսզի Մեզ Ազատ Ըլլանք

Քու Տէրդ աւելի լաւ ճանչնալու համար ազօթէ, Աստուծոյ խօսքը հաւատարմօրէն սերտէ եւ Ս. Գիրքը սորվեցնող եկեղեցի մը յաճախէ որպէսզի Աստուած գործածէ քեզ իր փառքին եւ քու ուրախութեանդ համար:

Bob La Forge

Եթէ որեւէ հարցումներ ունիս կողքէք քեզի օգնել: Կրնաս գիմել հետեւեալ հասցէին.

Վիզէն Նաչադրեան
Հայաստան, Երեւան 18
Նարթոս Փողոց թիւ 90

Հեռ. (374 10) 57-00-31 կամ 57-89-62

bunion@arminco.com

կամ այցելէ մեզ
www.ambunion.org

«Որքան շատ ըլլայ հալածանքը, նոյնքան աւելի անուշ կ'ըլլայ ազատութիւնը»



ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

ԿԱՐԵՒՈՐ ԹՈՒԱԿԱՆ ՄԸ ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՁ

Անկախութիւն

որուն համար տարիներո՛վ երազեցիմք

ու վերջապէս ունեցանք մեր ազատ, անկախ հայրենիքը

Բայց արդեօք անձնապէս ալ, ազա՞տ ենք

ԱՐԴԵՕՔ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ ՁՐԻ՞ Է

Ազատութիւնը ձրի չի դար: Զինուորներ ու կամաւորներ պէտք է պայքարին եւ նա հատակուին զայն ստանալու համար: Անոնք լաւ գիտեն թէ հաւանաբար իրենք չկարենան վայելել այդ ազատութիւնը, բայց կը զոհուին որ ուրիշներ վայելեն զայն:

Այս հայրենասէրներուն համար յուշարձաններ կը կանգնուին, եւ անոնց յիշատակը կը տօնուի մասնաւոր թուականներուն:

Բայց երեւակայեցէք որ անոնք գիտնան թէ թէեւ իրենց կեանքերը զոհեցին, մենք տակաւին կը նախընտրենք ապրիլ հին ընթացքին օրէնքներուն տակ: Որքան յուսախափ պիտի ըլլան: Հին ընթացքին տակ ապրողներ շատ կը գտնուին եւ կրնայ ըլլալ որ դուն ալ անոցմէ մէկն ես:

Ուրիշ բռնակալ մըն ալ կայ որ աւելի կը տիրէ մարդոց վրայ քան ուրիշ երկրի մը վրայ տիրողներ: Ան սնհատներու վրայ կը տիրէ եւ կը կործանէ անոնց ընտանիքները: Անոր ճանկերը այնքան ամուռ կը բռնեն որ անկարելի է անկէ ազատիլ:

Ի՞նչ է այս մեղ շարչարող բռնակալը: Զանա՛ օր մը տունէն դուրս ելել առանց դատողական ըլլալու, առանց բարկանալու եւ կամ առանց անձնասիրութեամբ: Երբէք դէ՛ զամ սխալ բառ մը չխօսելու մէկու մը եւ ընդհակառակը անձդ տրամագրելու որ ուրիշներու օգնես:



Կրան՞ մեզմէ որեւէ մէկը այդպէս ընել:

Չեմ կարծեր: Մեր սրտերուն վրայ ուրիշ իշխող մը կայ որ գերի բռնած է մեր խորհուրդները, մեր փափաքները եւ մեր գործերը: Մեր ազատութիւնը կաշկանդած է:

Այս բռնակը կը կոչուի մեղք, եւ բոլորս ալ անոր ենթակայ ենք:

Աստուծոյ խօսքին մէջ, (Հռ. 3:23) կ'ըսէ.

«Վասնզի ամէնը մեղք գործեցին եւ Աստուծոյ փառքէն պակասած են»: Որեւէ բան որ Աստուծոյ կամքին հակառակ է, մեղք է: Աստուած ստեղծած է մեղ: Ան ապապրած է մեղի թէ ինչպէս ապրելու ենք: Բայց մենք Աստուծոյ կամքը կը մերժենք եւ հետեւաբար կը մեղանչենք: Մեղքը՝ երբեմն երբեմն շարութիւն ընել չէ միայն, հապա Աստուծոյ դէմ ապստամբութիւնն է:

Մեղք գործողը նման է մարդու մը որ ճշգրիտ նշան չառներ: Կատարեալ նշան առնելու համար պէտք է միշտ նետը կեդրոնին դարնել: Մէջտեղէն դատ նետը ուր որ դպչի, կատարեալ նշանաւորութիւն մը չէ: Ոչ մէկ անձ կրնայ միշտ շիտակ նշան առնել եւ կեդրոնը դարնել:



Մեղքը այդպէս է: Ինչ սքաւադաներուն մէջ ալ ըլլաս, պէտք է ճիշդ կեդրոնը դարնես: Մեր կեանքի ընթացքին չենք կրնար ըսել թէ միշտ կեդրոնը զարկած ենք, եւ հետեւաբար բոլորս ալ սխալած, շեղած եւ մեղանչած ենք, եւ Աստուծոյ փառքէն ինկած:

Արդեօք Աստուած չգիտե՞ր որ մենք ամէն բան չենք կրնար կատարեալ ընել: Ինչո՞ւ ան կը դատէ մեզ երբ մարդկային տկարութիւններով լեցուն ենք: Պատասխանը Աստուծոյ սրբութեան մէջն է: Իր սրբութիւնը անփոփոխ է: Սաղ. 5:4-ի մէջ կ'ըսէ. «Չարը քու քովդ պիտի չբնակի: Հպարտները քու աչքերուդ առջեւ պիտի չկենան»: Ոչ մէկ մեղաւոր կրնայ Աստուծոյ առջեւ կայնիլ:

Գիտէ՞ր որ միայն մէկ մեղք գործելով իսկ արժանի չենք ըլլար Աստուծոյ առջեւ կենալու: Արդեօք կարելի չէ՞ որ Աստուած մի քանի փոքր մեղքերու աչք դոցէ: Ո՛չ: Որեւէ մեղք Աստուծոյ դէմ մեղանչել է որ մեր հոգին կը մեռցնէ ու ապագային դժողքի պատիժին կ'արժանացնէ:

Եթէ զինուոր մը պատերազմի մէջ սրտէն

զարնուի, կը մեռնի: Հարիւրաւոր ուրիշ փամփուշտներով ալ եթէ նորէն զարնուի, աւելի մեռած չըլլար: Մէկ կապարը կը բաւէ զինք մեռցնելու համար:

Մեղքն ալ այդպէս է: Յակոբոս 2:10 կ'ըսէ. «Ով որ բոլոր օրէնքը պահէ ու մէկ բանի մէջ յանցաւոր ըլլայ, անիկա ամէնուն պարտական կը ըլլայ»: Միակ մէկ մեղքը մեր հոգին կը մեռցնէ: Աւելի մեղքեր մեզ աւելի չեն մեռցնէ:

Մեղանչելով ոչ միայն կը մեռնինք, այլ Աստուծմէ ալ զատուած կ'ըլլանք: Եսայեայ 59:2 կ'ըսէ. «Ձեզ ու ձեր Աստուծոյն մէջտեղ բաժանում ձգողը ձեր անօրէնութիւնները եղան»: Ոչ եկեղեցի երթալը եւ ոչ ալ մեր բարի գործերը մեր հոգիին կեանք կրնան պարգեւել:

Աստուծոյ սուրբ արդարութիւնը կը պահանջէ որ մեր մեղքերուն պատիժը կրենք:

Մեր երկրին մէջ ոճրագործութեան դէմ օրէնքներ կան: Եթէ ոճիւ մը գործենք, պատիժը կը որոշուի ոչ թէ միայն ոճիւին մեծութեան համեմատ, այլ կախեալ է նաեւ թէ ի՞նչ տեսակի ոճիւ գործած ենք եւ ո՞վ վնասուած է:

Օրինակի համար, եթէ բարկանալով ժայռ մը հարուածենք եւ ճղմենք, պատիժ մը չտրուի մեզի, բայց եթէ բարկութեամբ մարդ մը սպաննենք, պատիժը բանտարկութիւն կ'ըլլայ քանի որ մարդ մը աւելի արժէքաւոր է քան ժայռը: Նոյնպէս ալ եթէ կատարեալ Աստուծոյ օրէնքին անհնազանդ ըլլանք իր անսահման փառքին դէմ մեղանչած կ'ըլլանք, եւ անոր համար պատիժը շատ աւելի մեծ կ'ըլլայ:

